ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՄՋ-21/1.1»

ք. Երևան «21» մայիսի 2021թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Սուրեն Ազատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարել թվով 185 աշխատակիցների միջոցով և պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը,

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **46 059 864** (քառասունվեց միլիոն հիսունինը հազար ութ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.4 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման

կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011000834	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 02831263	ՀՎՀՀ 00803554
	էլ. հասցեն՝ kkfactory@mail.ru
	Հեռ. (010) 283790
------------------------ (ստորագրություն)	------------------------ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«21» մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՄՁ-21/1.1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը ըստ ժամանակացույցի	
								մինչև հունիսի 30	մինչև օգոստոսի 15
1	35811170	Համազգեստ	լրակազմ	4	249996	999984	ՀՀ մարզեր և ք. Երևան	4	
2	35811170	Համազգեստ	լրակազմ	470	92004	43241880	ՀՀ մարզեր և ք. Երևան	150	320
4	18331200	Վերնաշապիկ	հատ	250	3396	849000	ՀՀ մարզեր և ք. Երևան		250
5	18331200	Վերնաշապիկ	հատ	250	3396	849000	ՀՀ մարզեր և ք. Երևան		250
10	35811190	Ուսադիր	զույգ	8	15000	120000	ՀՀ մարզեր և ք. Երևան	8	
տեխնիկական բնութագիրը									
1	**Համազգեստ՝ (Արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողի) - 4 լրակազմ** **Գլխարկ հովարով՝ մուգ կապույտ կիսաբրդյա** /317գ/մք խտությամբ, 67%բուրդ, 33%Պ/Է կտորից, մուգ կապույտ մահուդե /342գ/քմ 100%բուրդ/ գլխարկաբոլորքով՝ կարմիր մահուդե եզրաշերտով: Երկու ոսկեգույն փոքր կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ոսկեգույն ցանցահյուսազարդով: Գլխարկահովարը սև է, լաքապատ: Հովարից վերև՝ գլխարկաբոլորքի վրա, բացի ոսկեգույն լարահյուսից, ամրացվում է կաղնու ճյուղերի տեսքով 2 համաչափ ոսկեկար զարդ՝ 5-տոկոսանոց ոսկե թելերով, որի կենտրոնական մասում զետեղված են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի երկու արծիվները, սուրը և ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթու պատկերով, իսկ գլխարկագագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում, Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը: **Բաճկոն՝ տաք ներդիրով՝ մուգ կապույտ, անջրաթափանց կտորից**(210գ/մք խտությամբ 100%Պ/Է), կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից ձախ թևքին կարվում է թևքանշան,: Ներդիրը՝ հանովի, որը մշակվում է 70 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորով պատված մեմբրանե								

	տաքացուցիչով (100 % պ/է, 200 գր/մք խտությամբ) ներդիրը զարդակարվում է քառակուսի տեսքով, չունի թևքեր:Ներդիրը միասնական շղթայով ամրանում է բաճկոնին: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայական և կոճակով կոճկվող կափույրով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց ներդիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու փոքր մուգ կապույտ կոճակներով կամ կոճգամներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Մեջքը կոկետկայով, օձիքը ծալովի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: **Տաբատ/զույգ**/՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ 166 գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան: Եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է կարմիր վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով: Տաբատի աստառը մինչև ծնկները հասնող 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից: **Կիտել՝ տոնական** սպիտակ(կաթնագույն) կտորից (166 գ/մք խտությամբ 60% բուրդ, 40% Պ/Է) (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով, որի վրա գործվում է դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90գ/մք խտությամբ սպիտակ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ. **Կիտել՝ մուգ կապույտ կտորից** (166 գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է), (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով, որի վրա գործվում է դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով,ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ: **Փողկապ**՝ մուգ կապույտ գույնի, (արտ.2362, 35% բուրդ, 65%պ/է, 294գր.քմ խտությամբ) ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով / երկճյուղանի մետաղյա ոսկեգույն շերտիկ/:

2	**Համազգեստ/արական սեռի ծառայողների/ - 470 լրակազմ** **Բաճկոն ամենօրյա** -մուգ կապույտ, (համապատասխան ուսադիրներով և թևքանշանով), (արտ.2311, 317 գ/մք խտությամբ 67% բուրդ, 33% Պ/Է) կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ: Ձախ կողմի գրպանի վերին մասում կարմիր գույնի թելով գրվում է <<ՀՀ քննչական կոմիտե>>, իսկ աջ կողմի գրպանի վերին մասում՝ ծառայողի ազգանունը և անվան առաջին տառը: Գրպանների ձևավոր կապույտները կոճկվում են երկու մուգ կապույտ փոքր կոճակներով կամ կոճգամներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Թիկնամասը կոկետկայով: Օձիքը ծալովի, թևքերը ներկարված երկուական մուգ կապույտ փոքր կոճակներով կամ կոճգամներով կոճկվող, մանժետներով: Աստառը՝ 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: **Բաճկոն՝ տաք ներդիրով**, մուգ կապույտ (210 գ/մք խտությամբ 100% Պ/Է) անջրաթափանց կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից, ձախ թևքին կարվում է թևքանշան: Ներդիրը՝ հանովի, որը մշակվում է 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորով պատված մեմբրանե տաքացուցիչով (100% ա/է, 200 գր/մք խտությամբ) ներդիրը զարդակարվում է քառակուսի տեսքով, չունի թևքեր:Ներդիրը միասնական շղթայով ամրանում է բաճկոնին: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայական և կոճակով կոճկվող կափույրով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց ներդիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու փոքր մուգ կապույտ կոճակներով կամ կոճգամներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Մեջքը կոկետկայով, օձիքը ծալովի: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: **Կիտել՝ երկփեղկ**, ամենօրյա, մուգ կապույտ կտորից (արտ. 2311, 317գ/մք խտությամբ, 67% բուրդ, 33% Պ/Է) (համապատասխան վրանակար ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն ալյումինե համաձուլվածքով մեծ կոճակներով՝ կնգումի սպիտակ մորթու պատկերով տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի (Տես՝ ***ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն որոշման Ձև 8, նկար N 2***) - **250 հատ:** **Կիտել՝ միափեղկ,** ամենօրյա, մուգ կապույտ կտորից (արտ.2311, 317գ/մք խտությամբ 67% բուրդ, 33% Պ/Է) (համապատասխան վրանակար ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից: Միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով՝ ալյումինե համաձուլվածքով, կնգումի սպիտակ մորթու պատկերով, կարոնի թիկնամասով և փողքերի կտրվածքով (Տես՝ ***ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն որոշման Ձև 8, նկար N 3***) - **220 հատ:** **Տաբատ՝**մուգ կապույտ գույնի (արտ. 2311, 317 գ/մք խտությամբ, 67% բուրդ, 33% Պ/Է) կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակարով, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են: Տաբատի աստառը մինչև ծնկները հասնող 90 գ/մք խտությամբ մուգ կապույտ կտորից- **940** հատ: **Փողկապ**՝ մուգ կապույտ գույնի, (արտ.2362, 35%բուրդ,65%ա/է,294գր.քմ խտությամբ) ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով / երկճյուղանի մետաղյա ոսկեգույն շերտիկ/:

4	**Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ կտորից** (արտ 8702, 175 գ/մք խտությամբ 33% վիսկոզա, 67% Պ/Է), ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, կոճակով կոճկվող թեզանիքներով, ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Վերնաշապիկի թևքերը երկար են, կոճակով կոճկվող թեզանիքներով:
5	**Վերնաշապիկ՝ երկարաթև, կապուտ կտորից** (արտ 8702, 175 գ/մք խտությամբ 33% վիսկոզա, 67% Պ/Է), ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, կոճակով կոճկվող թեզանիքներով, ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Վերնաշապիկի թևքերը երկար են, կոճակով կոճկվող թեզանիքներով:
10	**Հանովի ուսադիրներ(բարձրագույն կոչում ունեցող ծառայողի)՝** 8 զույգ մուգ կապույտ գույնի դաշտով, կարմիր մակաշերտով և զոլերով՝ ամենօրյա համազգեստի համար - 4 զույգ, սպիտակ գույնի դաշտով, կարմիր մակաշերտով և զոլերով՝ ամենօրյա համազգեստի համար - 4 զույգ, ՈՒսադիրների աստղերը գործվում են 5-տոկոսանոց ոսկյա կանիտելով:

Մանրամասների համար օգտվել ''Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը'' սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 15.06.2018թ. թիվ 676-Ն որոշումների դրույթներից:

Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ էկալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի մակերեսային խտության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները:

- Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուր քննիչի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ:
- Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
- Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հաստատված նմուշի:
- Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր քննիչի համազգեստի չափսերը վերցնել ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում:
- Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում:
- Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի
  վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը:

Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հասցեների:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մասիսի 46/5 ՀՀ ՖՆ Գանձարանային գործակալություն հ/հ 900011000834 ՀՎՀՀ 02833263	«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ ք. Երևան, Զ. Սարկավագի 157 «Արարատբանկ» ԲԲԸ հ/հ 1510023294810100 ՀՎՀՀ 00803554
---------- (ստորագրություն) L.S.	---------- (ստորագրություն) L.S.

Հավելված N 2
« 21 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՄՁ-21/1.1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	35811170	Համազգեստ					999984	999984	999984	999984	999984	999984	999984	999984	**999984**
2	35811170	Համազգեստ					13800600	13800600	32201400	32201400	32201400	43241880	43241880	43241880	**43241880**
4	18331200	Վերնաշապիկ							849000	849000	849000	849000	849000	849000	**849000**
5	18331200	Վերնաշապիկ							849000	849000	849000	849000	849000	849000	**849000**
10	35811190	Ոււսադիր					120000	120000	120000	120000	120000	120000	120000	120000	**120000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02612263

(ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ
ք. Երևան, Ձ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
«21» մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՄՀ-21/1.1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 21 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՄՀ-21/1.1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն